ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա ՝ Ներառական կրթության իրականացման առանձնահատկությունները և դժվարությունները

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Սարգսյան
«Աբովյանի Ն. Վանյանի անվան N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4
Գլուխ 1. Համընդհանուր ներառում 6
1.1. Ներառական դպրոցների ֆիզիկական հարմարեցվածություն 8
Գլուխ. 2 Բազմամասնագիտական թիմեր և առարկայական ուսուցիչներ.....9
Եզրակացություն.....12
Գրականության ցանկ 14

Հապավումների ցանկ

ԱՏՀ- Առանցքային տեղեկատուների հարցազրույց

ԱՈԻՊ- Անհատական ուսուցման պլան

ԲՀՄԳ- Բժշկամանկավարժահոգեբանական գնահատում

ՖԽՔ- Ֆոկուս խմբային քննարկում

ՆԿ- Ներառական կրթություն

ԿԱՊԿՈՒ- Կրթության առանձնահատուկ պայմաննոր ունեցող

ԿԱՊԿԳ- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահտում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունն այժմ համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Այս տեսանկյունից յուրաքանչյուր , այդ թվում կրթության անձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանը խոչընդոտող գործոններ կարող են լինել իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցիչների վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները(հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող երեխաների համար դպրոցում տեղաշարժվելու սահմանափակումները կամ չտեսնող երեխաների համար իրեն հարմարեցված բրայլյան դասագրքերի և այլ ուսումնական նյութերի բացակայությունը և այլն): Նշված արգելքները վերացնելուց հետո ՝ յուրաքանչյուր երեխայի կարողություններին համապատասխան, պետք է ապահովել կրթական ծրագրերի մատչելիությունը: Հետևաբար, ՀՀ-ում յուրաքանչյուր, այդ թվում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխայի որոկյալ կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա յուրաքանչյուր սովորողի կարողությունների համակողմանի իրացմանը միտված հանրակրթական ծրագրերի մշակման և հարմարեցման, միջավայրային խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

Հատուկ, ինտեգրված և ներառական կրթության հասկացությունները:

Հատուկ կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպվում է առանձնացված միջավայրում ՝ հատուկ դպրոցում: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի հատուկ կրթության համակարգը ներառում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների կրթությունը

կազմակերպելու նպատակով հանրապետությունում գործում են հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ (երկարօրյա գիշերօթիկ ռեժիմով), որոնք իրականացնում են հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրեր:

Ինտեգրված կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան հանրակրթական դպրոցում է, սակայն նրա կրթության կազմակերպման և կրթական գործընթացում մասնակցության նպատակով չեն իրականացվել դասավանդման մեթոդների, ծրագրերի և դպրոցական միջավայրի փոփոխություններ և հարմարեցումներ: Արդյունքում երեխան հիմնականում դրուրս է մնում ուսումնական գործընթացից կամ մասնակցում է իր համար ուսուցչի կողմից չպլանավորված ուսումնական առանձին գործընթացներին:

Ներառական կրթություն: Խոսքը հենց հանրակրթական դպրոցներում բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մատուցվող որակյալ ուսուցման մասին է: Կրթության գերծընթացում երեխայի առավելագույն մասնակցությունն ապահովելու նպատակով կատարվելու են անհրաժեշտ մեթոդական, ծրագրային և միջավայրային փոփոխություններ և հարմարեցումներ՝ կրթության առանձնահատուկ պայմաններ: Երեխան բոլորի նման մասնակից է կրթական գործընթացին՝ իր կարողությունների առավելագույն չափով:

Նպատակի ձևակերպում

Ծանոթանալ ներառական կրթության իրականացման ժամանակ առաջացող խնդիրներին, հարցերին: Վերլուծել, գտնել բացթողումները ուսումանական պրոցեսը ավելի արձյունավետ դարձնելու ուղղությամբ: Մշակել, ուսումնասիրել անհրաժեշտ մեթոդական գրականություն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար:

Մասնակցել անհաժեշտ դասընթացներին և վերապատրաստումներին:Կողք կողքի աշխատել ուսուցչի օգնականի, հատուկ մանկավարժի, հոգեբանի, լոգոպետի և ծնողի հետ:

Ուսումասիրել դասարանում սովորող ԿԱՊԿՈՒ երեխայի հետաքրքրությունների, կարողությունների, ձեռքբերումների մասին:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

- Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:
- Կկիրառվի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:
- Մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները: Չի կարելի ստեղծել

ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի լինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:՛

Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:

2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում: 2014թ. դեկտեմբերի 1–ին փոփոխություն կատարվեց «Հանրակրթության մասին» օրենքում և ուժը կորցրած ճանաչվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Այդ փոփոխությամբ ՀՀ-ն հռչակեց ներառական կրթությունը որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունք: Մինչև 2025 թ. Հայաստանում բոլոր հանրակրթական դպրոցների կրթության կազմակերպումը կլինի ներառական: Օրենքի նոր փոփոխությունը ենթադրում է ներառական կրթությանն աջակցող եռաստիճան՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ներդրում, դպրոցի, մարզի և հանրապետության մակարդակներում: Օրենքի փոփոխությամբ երեխայի անհատական ուսուցման պլանը սահմանվում է որպես իրավական փաստաթուղթ՝ հիմնված հանրակրթության պետական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի արդյունքների վրա:

1.1. Ներառական դպրոցների ֆիզիկական հարմարեցվածություն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ուսումնական հասատատություններում պետք է ստեղծվեն ոչ միայն անհրաժեշտ մեթոդական ձեռնարկներն ու առարկայի օժանդակ նյութերը, այլ ուսումանական հաստատությունը պետք է ունենա անհրաժեշտ պայմանները երեխաների տեղաշարժը ապահովելու համար:

1.Քանի որ անցում է կատարվել դեպի համընդհանուր ներառում, ապա պետք է ուսումանական հաստատությունները ապահովված լինեն առաջինը թեքահարթակներով ՝ դրսում և ներսում: Սակայն ոչ բոլոր դպրոցներն են ապահովված թեքահարթակներով: Որոշ դպրոցներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դասասենյակները լինում են առաջին հարկում, սակայն լինում են դեպքեր, երբ դասընացը պետք է իրականացնել օրինակ՝ երկրորդ հարկի դասասենյակում, երեխաները կամ ուսուցիչը իրենք են փորձում երեխային բարձրացնել երկրորդ հարկ, որը շատ վտանգավոր է հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխայի համար և կարող է շատ լուրջ վնաս հասցնել նրա առողջությանը: Եվ շատ դեպքերում երեխաները չեմ մասնակցում դասընթացին դուրս մնալով պրակտիկ դասեր իրականացնելուց:

2.Մյուս խնդիրը սանհանգույցներն են, որոնք բացարձակապես հարմարեցված չեմ ԿԱՊԿՈՒ երեխաների համար: Մարզերի սանհանգույցները գտնվում են ամխիթար վիճակում:

3.Ոչ մի դպրոցի սպորտդահլիճ հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ երեխայի համար, առավել ևս չկա հատուկ մասնագետ ուսուցիչ, ով կզբաղվի նման խնդիրներ ունեցող երեխաների հետ:

Այսպիսով շատ դպրոցներ դեռ հարմարեցվախ չեն ԿԱՊԿՈՒ աշակերտների ուսումը մատչելի և հեշտ դարձնելուն:

ԳԼՈՒԽ. 2 ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԻՄԵՐ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Մինչև երկիրն անցնում է ներառական կրթության գործելակերպերին, թիմային աշխատանքը և համագործակցությունը կարևորվում են կրթության բոլոր մակարդակներում:

Բազմամասնագիտական թիմը բաղկացած է բազմաթիվ ոլորտները ներկայանող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից՝ մեծամասամբ ծնողից: Բազմամասնագիտական թիմում կարող է ընդգրկվել նաև երեխայի ընտանիքին չպատկանող, սակայն երեխային շատ հոգեհարազատ անձնավորություն ում երեխան սիրում և վստահում է: Թիմի ծրագրերը տարբեր են լինում երեխայի գնահատումից մինչև, անհատական ծրագրի քննարկում կամ երեխային հաջողությամբ օժանդակելու համատեղ աշխատանքի պլանավորում:

Թիմի անդամները պետք է հանդես գան որպես միասնական նպատակ ունեցող գործընկերներ, որոնք ունեն բացառիկ և անհրաժեշտ փորձառություն, և արժևորում են յուրաքանչյուրի ներդրումը: Կատարվելիք աշատանքները բաշխում են միմյանց միջև:

Բազմամասնագիտական թիմի ներսում մասնագիտական համագործակցությունն օգնում է ապահովել, որ երեխային և նրա ընտանիքին վերաբերող աշխատանքը լինի համապարփակ՝ ներառելով կրթության ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ կողմերը: Թիմի վերջնական նպատակը աշակերտին և ընտանիքին մատուցվող ծառայության բարելավումն է:: Աշակերտների կրթական կարիքը գնահատող մասնագետները հավաքում են երեխայի վերաբերյալ տեղեկատվություն աշակերտների ուժեղ կողմերի, մարտահրավերների և կարիքների մասին՝ թիմին փոխանցելով. անհրաժեշտ բժշկական տվյալները, աշակերտի առաջադիմության փաստաթղթերը և այլն, պաշտոնական գնահատման արդյունքները ոչ պաշտոնական գնահատման արդյունքները: Օրինակ՝ դասարանական աշխատանքի նմուշներ և սոցիալական վարքի դիտարկումներ, ընտանիքի կողմից տրամադրված տեղեկատվություն, սկզբնական տվյալներ ՝ ԱՈԻՊ-ը մշակելու և հետագա կրթության արդյունավետությունը գնահատելու համար: Թիմը որոշում է աշակերտի համար մասնագիտացված ծառայությունների

անհրաժեշտությունը, կազմում է անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ) և պարբերաբար, հընթաց քննարկում է երեխայի կարիքները։

Թիմում ընդգրկվում են ՝ լոգոպետներ, ընդհանուր և հատուկ հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ, ուսուցչի օգնականը։ Թիմում շատ կարևոր և առանցքային տեղ է գրավում ընտանիքի անդամների ընդգրկումը, եթե անհրաժեշտ է լինում նաև երեխայի ընդգրկումը նույնպես։ Բացի ընտանիքի անդամներից և երեխային հոգեհարազատ անձնավորությունից թիմում կարող է ընդգրկվել նաև համայնքից անձնավորություն, որովհետև լինում են դեպքեր, երբ երեխան դասարանում չի խոսում, հաղորդակից չի լինում, սակայն հաղորդակից է լինում դրսում, օրինակ՝ խանութում, այդ տեղեկությունը շատ արժեքավոր է երեխայի կրթությունը պլանավորող թիմի համար։

Թիմի կազմը որոշելուց հետո մեկ-երկու հոգի պետք է նշանակվեն խմբի աշխատանքը համակարգողներ։ Ցանկալի է, որ նրանց թեկնածությունները որոշի թիմը. թիմի ղեկավար սովորաբար դառնում է ուսուցիչը, հոգեբանը կամ երեխայի հարցերով անմիջականորեն զբաղվող անձը։ Որպես կանոն առաջնորդություն ստանձնում են մի քանիսը, օրինակ՝ ուսուցիչը, մասնագետներից և ընտանիքի անդամներից մեկը։ Վերջինիս ներգրավումը թիմում հնարավոր է միայն այն դեպքում, երբ թիմում առկա է փոխադարձ վստահություն և երեխայի ընտանիքի անդամը իրեն անկաշկանդ է զգում այնտեղ։

Բազմամասնագիտական թիմի հիմնական անդամների դերերն ու պարտականությունները՝

Թիմի համակարգող: Թիմի համակարգողը պատասխանատու է թիմային հանդիպումների կազմակերպման համար, օրինակ.՝որոշում է հանդիպումների օրը, ժամը և վայրը, որոշում է, թե ովքեր են լինելու հիմնական կազմում և հրավիրում է հանդիպման, ծնողներին հրավիրում է հանդիպման, նախագահում է ժողովը կամ նշանակում է նախագահի այլ թեկնածուի, խրախուսում է թիմի անդամներին[a] ակտիվորեն մասնակցելու հանդիպմանը, ապահովում է, որ յուրաքանչյուր ոք իմանա թիմի կատարած առաջարկությունների, դրանց կատարման պատասխանատուի, և անհրաժեշտ ռեսուրսների մասին, դպրոցական համայնքին տեղեկացնում է թիմի

բոլոր անդամների աջակցության մասին, ապահովում է է ռեսուրսների հատկացումները՝ ելնելով վերհանված կարիքներից։

Ուսուցիչներ :Ուսուցիչները և հատուկ մանկավարժները պետք է ներառական դասարաններում միմյանց միջև կիսեն և հավասար պատասխանատվություն ունենան դասարանի բոլոր երեխաների համար։ Դասարանում ուսուցչի դերը հիմնականում առարկայի ուսուցումն է։ Սակայն համատեղ աշխատող թիմում հանրակրթության ուսուցչի դերն ընդլայնվում է՝ ներառելով. առաջնային գնահատումը, մասնակցությունը անհատական ուսուցման պլանի մշակմանը (օգնում է մշակել, վերանայել և փոփոխություններ կատարել), օգնությունում է աշակերտին անհրաժեշտ միջամտությունները և ռազմավարությունները որոշելիս, օգնությունում է կրթական ծրագրի փոփոխությունները իրականացնելիս, դպրոցական անձնակազմի աջակցության կարիքների վերհանում՝ հանրակրթության ծրագրում աշակերտի առաջընթացին նպաստելու համար. դպրոցի և ընտանիքի միջև կապի պահպանում։ Ուսուցիչը ծնողներին պարբերաբար տեղեկացնում է աշակերտի ուսումնական առաջադիմության մասին, հայտնում է գնահատականները և ներկայացնում է կրթական ծրագիրը։

Դպրոցի հոգեբան :Ստանձնում է հետևյալ պարտականությունները՝ երեխայի կրթական կարիքների գնահատում, գնահատման տվյալների վերլուծություն և մեկնաբանություն ընտանիքների և թիմի անդամների համար, մասնակցություն ուսումնական ծրագրերի փոփոխությունների և աշակերտների կրթական կարիքներին համապատասխան միջամտությունների անհրաժեշտության վերաբերյալ քննարկումներին, շարունակական դիտարկումների իրականացում՝ ուսումնական ծրագրերի փոփոխման նպատակահարմարությունը և միջամտությունների արդյունավետությունը որոշելու համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում գործում է ոչ, թե ներառական կրթության, այլ ինտեգրված կրթության մոդելը: ԿԱՊԿՈՒ երեխան ինտեգրված է դպրոց, կրթություն է ստանում բոլորի հետ միասին, սակայն նրա նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում՝ սկսած ԱՈՒՊ-ից մինչև «ներառականների համար» միջոցառումների կազմակերպումը: Կրթության որակ հասկացությունը որևէ կերպ չի առնչվում ՀՀ-ում ՆԿ համակարգի հետ:

ՆԿ իրականացման ընթացքում գոյություն չունի մասնագիտական թիմի նկատմամբ ընդհանուր մոտեցում: Սա չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ կրթության որակի ապահովման վրա : Բազմամասնագիտական թիմի անդամները հստակ պատկերացում չունեն իրենց պարտականությունների մասին: Առարկայական ուսուցիչները անտարբեր են ՆԿ նկատմամբ և բավարար ժամանակ չեն տրամադրում ԿԱՊԿՈՒ երեխայի հետ աշխատանքին:

Բազմամասնագիտական թիմի-առարկայական ուսուցիչներ և ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներ համագործակցությունը թույլ է: Առարկայական ուսուցիչները չեն վստահում բազմամասնագիտական թիմին : Ծնողները չեն մասնակցում ԱՈՒՊ-ների կազմանը: ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ գոյություն ունի կանխակալ և կարծրատիպային վերաբերմունք հասարակության մի հատվածի մոտ: Նման վերաբերմունքը վերարտադրվում է ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների կողմից: Համընդհանուր ներառականության վերարտադրման համար դպրոցների թվի դինամիկայի և ֆինանսավորման հնարավորությունները ծարունակում են մնալ անորոշ: Այս պայմաններում ՆԿ համակարգը պատրաստ չէ անցնելու համընդհանուր ներառական կրթության:

ՆԿ կրթություն ՀՀ-ում պետք է իրականան առաջինը ստեղծելով ճիշտ բազմամասնագիտական թիմ, պետք է բոլոր դպրոցներին կցվի անհրաժեշտ մասնագետները, ովքեր կօգնեն առարկայական ուսուցչին, ուսուցման պրոցեսում և ուսուցիչը իրեն ավելի համրձակ կզգա դասապրոցեսի ընթացքում և այլ ուսումնական գործընթացներ իրականացնելիս:

Պետք է ավելացնել բյուջետային հատկացումները, ստեղծել համապատասխան պայմաններ ԿԱՊԿՈՒ երեխաների համար ուսուցումը ավելի հաճելի, պարզեցված, իրենց հարմարեցված զգալու դարձնելու համար:ՆԿ համակարգի բարեփոխումների հետ կապված ցանկացած նախաձեռնություն պետք է մշակվի հասարկայնորեն բաց և թափանցիկ մթնոլորտում: Արդյունքները պետք է ներկայացվեն հանրային քննարկումներում ՝ պետական, հասարակական և միջազգային հարթակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն
2. Առարկայական պետական չափորոշիչ
3. Առարկայական ծրագրեր
4. Համացանց /www.aniedu.am/
5. Ներառական կրթության իրականացման ռազմավարություն դասագիրք (2019 թ. Մինեսոյի համասարան, ԱՄՆ)